



Հատված՝ Սիա, Աստժո Գառը, Կոլթեր Ռեյս

Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՍՈՎՈՐԵԼ ՍՊԱՍԱԿՈՐՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՍՈՒՐԲ ԾՆՆՆԴՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

«Սա տարվա եղանակ է սիրելի, Սուրբ Ծնունդ շուտով այստեղ կլինի: Պատմիր Հիսուսի ծննդյան մասին, երբ որպես մանուկ եկավ նա երկիր» («Սուրբ Ծննդյան երգը», Երեմիաների երգարան, 52):

Սուրբ Ծնունդը հրաշալի ժամանակ է, երբ ոչխարները, հովիվները, մտորները և աստղերը հանկարծ նոր իմաստ են ստանում: Նրանք դառնում են մարդկության պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկի՝ Հիսուս Քրիստոսի ծնունդի կարևոր դերակատարներ: Շատ ընտանիքներ

իրենց տներում բեմադրում են Սուրբ Ծննդյան պատմությունը: Մյուսները նախընտրում են կարդալ Նրա ծննդյան պատմությունը կամ մասնակցել որևէ ներկայացման: Քրիստոսի մասին գրված բոլոր պատմությունների նման, Նրա ծննդյան պատմությունը լի է ծառայության մասին դասերով,

նան, թե ինչպես կիսվենք Նրա լույսով, որպեսզի լուսավորենք աշխարհը: «Սուրբ Ծննդյան պատմությունը սիրո պատմություն է», - ասել է Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Հենրի Բ. Մյրինգը:

«... Քրիստոսի ծննդյան պատմություններում մենք կարող ենք տեսնել և զգալ, թե ով էր Նա և ով է Նա: Դա թեթևացնում է մեր բեռը, երբ անցնում ենք ճանապարհը: Եվ կառաջնորդի մեզ մոռանալ մեր սեփական անձը և թեթևացնել ուրիշների բեռը»:¹

«Որովհետև այն իջեւանումը տեղ չ'կար կորակց համար», (Ղուկաս 2.7):

Իջևանատան տերը չկարողացավ տեղ գտնել Փրկիչի համար, բայց մենք չպետք է թույլ տանք այդ սխալը: Մենք պետք է տեղ պատրաստենք Փրկիչի համար մեր սրտերում՝ տեղ տալով մեր եղբայրներին ու քույրերին մեր սեղանների շուրջ, մեր տներում և մեր ավանդույթների շրջանակներում: Ընտանեկան շատ ավանդույթներ կարող են ավելի քաղցր և նույնիսկ ավելի հիշարժան լինել, եթե ընդգրկվեն ուրիշ մարդիկ: Դայանայի ընտանիքը սովորություն ունի հրավիրել ինչ-որ մեկին իրենց հետ Սուրբ Ծնունդն անցկացնելու: Յուրաքանչյուր դեկտեմբերին նրանք քննարկում են, թե ում կցանկանային հրավիրել:² Միգուցե ձեր ընտանիքը ևս սկսի նման սովորույթ զարգացնել: Գուցե ինչ-որ մեկը, ում դուք սպասավորում եք, ցանկանա միանալ ձեր ընտանիքին՝ միասին երգելու Սուրբ Ծննդյան սիրված երգերը: Դուք նաև կարող եք Սուրբ Ծննդյան ճաշի սեղանի շուրջը հյուրընկալել ձեր տարածքից ինչ-որ մեկին, ով ընտանիք չունի:

Փրկիչի ծնունդը նշելու ի՞նչ ավելի լավ եղանակ կարող է լինել, քան Նրա հյուրընկալության օրինակին հետևելը: Հիշենք, որ Նա հրավիրում է «բոլորին՝ գալ իր մոտ և ճաշակել իր բարությունից. և նա չի մերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն, սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, այդ թե կին. և նա հիշում է հեթանոսներին. և բոլորը նույնն են Աստծո համար՝ թե՛ հրեան, թե՛ հեթանոսը» (2 Նեփի 26.33): Տեղ տվեք և հյուրընկալ եղեք:

«Եվ այն տեղումը հովիվներ կային դաշտումը կացող, որ գիշերն իրանց հօտերը պահում էին» (Ղուկաս 2.8):

Կարծես տեղին է, որ հովիվները առաջիններից էին, ովքեր ողջունելու էին նորածին Փրկիչին: Հնօրյա մարգարեները Հիսուս Քրիստոսին կոչել են «Իսրայելի հովիվ» (Սաղմոս 80.1) և «Հովիվ ողջ աշխարհի վրա» (1 Նեփի 13.41): Եվ Քրիստոսն Ինքն է ասել. «Ես եմ բարի Հովիվը, և ես իմ ոչխարներին

ճանաչում եմ» (Հովհաննես 10.14): Մեր ոչխարներին ճանաչելը և նրանց հսկելը կարևոր մասն է Փրկիչի ձևով կատարվող հովվության և սպասավորության:

Փայլուն լույսեր և նախշազարդեր՝ այնքան բաներ կան դիտելու Սուրբ Ծննդյան օրերին: Բայց Ծննդյան տոների ամենամեծ գեղեցկությունը գուցե երևում է այն ժամանակ, երբ հիշում ենք, որ մեր ուշադրությունը պիտի սևեռենք նրանց վրա, ում սպասավորում ենք և հսկենք մեր հոտերը: Ուշադիր լինելով, մենք կարող ենք տեղեկանալ ինչ-որ մեկի սիրած զբաղմունքի մասին կամ հարցնել մեկին, թե նա ինչ է ծրագրում անել արձակուրդներին: Մենք ուշադիր ենք, երբ տեսնում ենք մարդկանց կարիքները և արձագանքում դրանց՝ թե՛ ակնհայտ, թե ոչ այնքան ակնհայտ կարիքների դեպքում:

Երբ Շերիլն անսպասելիորեն կորցրեց ամուսնուն՝ Միքին, նա շատ վշտացած էր: Մոտենում էին Սուրբ Ծննդյան տոները, որոնք նա առաջին անգամ պետք է անցկացնեք առանց ամուսնու, և մենակությունն ավելի ճնշող էր դառնում: Բարեբախտաբար, նրա սպասավորող քույրը՝ Շաունան, նրա կողքին էր: Շաունան և նրա ամուսինը՝ Ջիմը, հրավիրեցին Շերիլին միասին անցկացնել տոնական օրերը: Նկատելով Շերիլի մաշված վերարկուն, նրանք որոշեցին գործել: Սուրբ Ծնունդից մի քանի օր առաջ նրանք Շերիլի համար գնեցին Սուրբ Ծննդյան նվեր՝ գեղեցիկ նոր վերարկու: Նրանք ծանոթ էին ոչ միայն Շերիլի նյութական կարիքներին, այն, որ նա չունեք տաք վերարկու, այլև տեղյակ էին, որ նա մխիթարության և ընկերակցության կարիք ուներ: Նրանք քայլ արեցին՝ իրենց ուժերի ներածին չափով հոգավորվ այդ կարիքները և գեղեցիկ օրինակ ծառայելով, թե ինչպես մենք էլ կարող ենք հսկել մեր հոտերը:³

«Հովիվ մարդիկն իրար ասեցին. Եկեք գնանք միևնույն Բեթլեհեմ» (Ղուկաս 2.15):

«Եկեք գնանք» արտահայտությունը եռանդուն հրավեր է: Հովիվները չէին մտահոգվում, որ իրենց ընկերները շատ հոգնած կլինեին ուղևորությունը կատարելու համար: Նրանք լուռ ու մենակ չուղևորվեցին Բեթլեհեմ: Այլ ուրախ դիմելով մեկը մյուսին՝ նրանք ասացին. «Եկե՛ք գնանք»:

Թեև մենք չենք կարող հրավիրել մեր ընկերներին, որ գան և տեսնեն մանուկ Փրկիչին, սակայն կարող ենք հրավիրել նրանց զգալ Սուրբ Ծննդյան ոգին (կամ Քրիստոսի ոգին)՝ մեզ հետ ծառայելով: «Սուրբ Ծննդյան ոգին մեծարելու եղանակներից մեկն է՝ առատաձեռնորեն օգնության հասնել մեր շրջապատի մարդկանց և նվիրվել նրանց», - ասել է Բոնի L. Օսկարսոնը՝ Երիտասարդ Կանանց Նախկին գերագույն նախագահը:⁴ Պատկերացրեք, թե ձեր ձեռքում մոմ կա: Վստահաբար, մարդիկ

կտեսնեն և կօգտվեն ձեր մոմի լույսից, բայց պատկերացրեք, թե ինչ ջերմություն նրանք կզգան, եթե ձեր մոմով վառեք նրանց մոմը և թույլ տաք, որ իրենք տանեն իրենց լույսը:

Քրիստոսն անձամբ ուսուցանել է, որ նրանք, ովքեր կհետևեն Իրեն, կունենան կյանքի լույսը (տես Հովհաննես 8.12): Նրա նման ծառայելը մի եղանակ է, որով կարող ենք հետևել Իրեն և վայելել այդ խոստացված լույսը: Ուստի, կիսվեք այդ լույսով և հրավիրեք մյուսներին ծառայել ձեզ հետ: Ինչպե՞ս կարող եք միասին ծառայել դուք և նրանք, ում սպասավորում եք: Միասին կարող եք պատրաստել ձեր սիրած ուտեստը կամ անակնկալ մատուցել ինչ-որ մեկին փոքրիկ նվերի կամ երկտողի տեսքով: Միասին դուք կզգաք այն լույսը, որը գալիս է Քրիստոսի ծառայության օրինակին հետևելուց:

«Եւ երբոր տեսան՝ իմացրին այն բանն, որ այս երեխայի համար ասուեցաւ Նորանց» (Ղուկաս 2.17):

Կարելի է պատկերացնել հովիվների ուրախ ոգևորությունը, երբ նրանք կիսվում էին Քրիստոսի ծննդյան զարմանահրաշ լուրով հնարավորինս շատ մարդկանց հետ: Հրեշտակների կողմից ազդարարված Մեսիան, ում մասին այդքան մարգարեացել էին, եկել էր: Նա այնտե՞ղ էր: Իրականում, Փրկիչի մասին բարի լուրով կիսվելը Սուրբ Ծննդյան պատմության գլխավոր մասն է: Հրեշտակները երգում էին: Աստղը ցույց էր տալիս ճանապարհը: Եվ հովիվները տարածում էին լուրն ամենուրեք:

Մենք կարող ենք մեր ձայնն ավելացնել Սուրբ Ծննդյան պատմությանը՝ կիսվելով բարի լուրով և վկայելով Փրկիչի մասին: «Եթե ծառայելու ձեր ջանքերում արտոնություն ունեք ներկայացնելու Փրկիչին, հարցրեք ինքներդ ձեզ. «Ինչպե՞ս կարող եմ կիսվել ավետարանի լույսով այս անհատի կամ ընտանիքի հետ», - ասել է Քույր Զին Բ. Բինգհեմը՝ Սփոփող Միության Գերագույն նախագահը: Հոգին ի՞նչ է ոգեշնչում ինձ անել»: ⁵

Ահա մի քանի առաջարկներ, եթե ձգտում եք իմանալ, թե ինչպես կարող եք կիսվել ձեր վկայությամբ Փրկիչի և Նրա ավետարանի մասին:

- Գտեք սուրբ գրության մի հատված, որն արտահայտում է Փրկիչի հանդեպ ունեցած ձեր զգացմունքները կամ բացատրում է, թե ինչու եք դուք երախտապարտ Նրան: Կիսվեք դրանով այն մարդկանց հետ, ում դուք սպասավորում եք:
- Ուղարկեք Սուրբ Ծննդյան տեսանյութ, կցելով տեքստային հաղորդագրություն կամ լրատվամիջոցներից վերցված ուղերձ: Հրաշալի ուղերձներ կան ChurchofJesusChrist.org կայքում:
- Ձեր ընկերներից մեկին պատմեք մի հատուկ հիշարժան պահի կամ ավանդույթի մասին, որը ձեզ հիշեցնում է Քրիստոսին:

Հավատացեք, որ Սուրբ Հոգին կվկայի ձեր վկայության ճշմարտացիության մասին, ինչպես Նա վկայեց Միմեռնին և Աննային, որ մանուկ Հիսուսը Փրկիչն է (տես Ղուկաս 2.26, 38):

«Որպեսզի իսկապես պատվենք [Հիսուս Քրիստոսի] աշխարհ գալը, մենք պետք է վարվենք Նրա նման և կարեկցանքով ու ողորմածությամբ օգնության հասնենք մեր մերձավորներին», - ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դիտեր Ֆ. Ուլստորֆը: «Նա մենք կարող ենք ամեն օր անել՝ թե՛ մեր խոսքերով, և թե՛ գործերով: Թող որ այն դառնա Սուրբ Ծննդյան մեր ավանդույթը, անկախ նրանից, թե որտեղ ենք գտնվում՝ լինենք մի քիչ ավելի բարի, ավելի ներողամիտ, քիչ դատապարտող և մեր ունեցածից ավելի առատաձեռն կիսվենք կարիքավորների հետ»: ⁶

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Henry B. Eyring, “Christmas Stories” (First Presidency Christmas devotional, Dec. 6, 2009), broadcasts.ChurchofJesusChrist.org.
2. Stiu Daiana Melina Albornoz Díaz, “Sharing Christmas,” *Liahona*, Dec. 2007, 17:
3. See Cheryl Boyle, “He Would Have Bought It for You,” *Ensign*, Dec. 2001, 57.
4. Bonnie L. Oscarson, “Christmas Is Christlike Love” (First Presidency Christmas devotional, Dec. 7, 2014), broadcasts.ChurchofJesusChrist.org.
5. Զին Բ. Բինգհեմ, «Սպասավորել Փրկիչի ձևով» *Լիստուս*, մայիս 2018, 104:
6. Dieter F. Uchtdorf, “Scatter Your Crumbs” (First Presidency Christmas devotional, Dec. 3, 2017), broadcasts.ChurchofJesusChrist.org.